


ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆՅԱՆ

ՀԵՔՅԱԹ  
ԴԱՐԲՆԻ ԿՈՐԴՈՒ  
ՅԵՎ  
ՅՈՐԹ-ԳԼԽԱՆԻ ԿԻՃԱՊԻ  
ՄԱՍԻՆ



891.99Ե.

Խ-48

ՊԵՏՇՂԱՏ

891.990.

խ - 48

✓

ՀԵՔՅԱԹ  
ԴԱՐԲՆԻ ՎՈՐԴՈՒ  
ՅԵՎ  
ՅՈՐԹ ԳԼԽԱՆԻ ՎԻՇԱՊԻ  
ՄԱՍԻՆ

Նկարները՝ Գ. ԲՐՈՒՏՅԱՆԻ

ՀԱՅԹԵՏԶՐԱՑ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1940

08.05.2013

9699

Պատմաբան Ս. Վահանյան  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

МКРТИЧ ХЕРАНИЯ  
Сказка о сыне кузнеца  
и о семиглавом  
драконе  
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г



1326

Գլավիտի լիազոր՝ Բ-1032. Հրատ. 4140.40  
Պատ էր 8-0. Տիրած 3000.  
Թուղթ 62x94. Տպագր. 2 1/2 մամ.  
Մեկ մամուլում 25480 նշան.  
Հանձնված է արտադրության 4 դեկտեմբերի 1939 թ.  
Ստորագրված է տպագրության համար 21 հունվարի 1940 թ.  
Հայպետհրատի I տպարան, Յերևան, Լենինի, 65

1

Հին մի քաղաք, մի գետ վճիռ,  
Այդ գետափին կար մի խրճիթ,  
Խրճիթն ուներ հողե տանիք,  
Մեջն ապրում էր մի ընտանիք։—  
Հայրը՝ վարպետ, արի զարբին,  
Մայրը՝ բարի մի տանտիկին,  
Ունեյին ժիր ու գեռատի  
Հասակակից յերկու փոքրի,—  
Մեկը տղա, մյուսը աղջիկ,  
Անունները՝ Վարդ ու Քաջիկ։—  
Յերկու ծաղիկ մեկտեղ բուսած,  
Խնձոր մի հատ՝ միջից կիսած.  
Սիրում էյին մեկ-մյուսին,  
Աղջիկն՝ արե, տղան՝ լուսին։

Հնոցի դեմ կանգնած արի,  
Նրանց զարբին հայրը բարի  
Աշխատում էր, յերկաթ կռում,  
Յերկաթի հետ համառ կռվում։—  
Շինում էր բան ու գերանդի,  
Ու քրտինքովն իր ճակատի  
Հնոց-քուրան թեժ էր անում  
Ու կրակից ապրուստ հանում.  
Ապրուստ հանում իր թանկագին  
Ու սիրասուն ընտանիքին,

Վոր ապրում եր խարխուլ ու հին  
են խրճիթում գետի ափին:

2

Այդ քաղաքի բլրի կողքով,  
Քերելով ժայռ ու առապար,  
Արևելքից դեպ արևմուտք  
Զգվում եր մեծ մի ճանապարհ:  
Գալիս էյին քարավաններ,  
Անցած շեներ ու անապատ,  
Անցնում էյին բարձած գանձեր—  
Ատլաս ու խաս, փոսկի, արծաթ...  
Քայլում էյին իրար հետքով  
Շղթա կապած ողակ-ողակ  
Անթիվ ուղտեր սապատավոր,  
Կքած իրենց բեռների տակ:  
Զնգում էյին հարյուրավոր  
Զանգակները ջինջ ու թեթև,  
Ու կորչում եր խորհրդավոր  
Քարավանը բլրի յետև...

\*

Սեզ սարերի կատարներից  
Բացվում է ջինջ արշալույսը,  
Ու խրճիթի նեղ յերզիկից  
Ներս է հոսում ահա լույսը:  
Բլրալանջի ճամբով են մեծ  
Քարավան է անցնում ելի,  
Ու ծորհում է լուսթյան մեջ  
Զնգոցը զիլ զանգակների.  
— Զրը՛նգ-զրը՛նգ, զրը՛նգ-զրը՛նգ...  
Տարածվում է յերգը զուլալ

Դեռ կիսարթուն քաղքի վրա,  
Լսում է լուռ դարբնի տղան՝  
Զարթնած անուշ քնից իրա...

— Ո՛ւր են գնում, ասա, հայրիկ,  
Քարավաններն ամեն անգամ,—  
Հարցնում է հետաքրքիր  
Քաջիկը մեր տառ տարեկան:  
— Հեռո՛ւ-հեռո՛ւ յերկիրները,  
Դե, ո՞վ գիտե նրանց բանը,—  
Հնչում է կարճ՝ նրա հարցի  
Անբավարար պատասխանը:  
— Ի՞նչ են տանում նրանք, հայրիկ,—  
Հարց է տալիս տղան կրկին:  
— Տանում են ճոխ հարստություն,  
Գանձեր պես-պես ու թանկագին...  
— Ո՛ւմ են տանում, ասա, հայրիկ,  
Գանձերն այդ ճոխ ու թանկագին...  
— Ե՛, զավակս.—կանգնած մոռյլ  
Իր խոհերի ծովի առաջ՝  
Պատասխան է տալիս հայրը,  
Արձակելով մի խոր հառաչ.—  
Գանձերն այդ ճոխ ու բազմազան,—  
Յերկրի առատ բերք ու բարին,  
Տանում են փողջ անկուշտ գազան  
Հարուստներին, թագավորին,  
Վոր ապրում են մեծ ու շքեղ  
Պալատներում, ամարաթում,  
Վորոնք անկուշտ ձրիակեր,  
Թեպետ յերբեք չեն աշխատում,  
Բայց չեն ուտում նրանք չոր հաց,  
Խմում մեզ պես ջուր հասարակ,

Նրանց հացը մեղրահաց է,  
 Ըմպելիքը՝ քաղցր ոշարակ...  
 Ինչ վոր լավ է, ազնիվ ու թանգ՝  
 Ստեղծում ենք մենք քրտինքով,  
 Վայելում են միայն նրանք  
 Մեր քրտինքի վաստակը ծով...

Այսպես ահա պատասխանեց  
 Հուզված հայրը իր Քաջիկին,  
 Վոր նստած էր անկողնու մեջ  
 Մի հնամաշ շապիկ հագին:  
 — Վեր կաց, վորդի, գործիդ անցիր,  
 Դուրս է գալիս արևն ահա,  
 Մենք ցավ ունենք, քարավանը  
 Թող վոր իրա ճամբով գնա...  
 Ճակտի վրա մի ամպ մթին  
 Ասաց դարբին հայրը նրան,  
 Ապա կապեց գոգնոցը հին,  
 Գնաց նորից վառի քուրան:

\*

Փուքս է փչում Քաջիկն ահա,  
 Հայացքը հոր դեմքին հառած,  
 Վոր յերկաթ է կռում կրկին՝  
 Ծանրը մուրճը ձեռքը առած:  
 Միտք է անում՝ ի՞նչ է խորհում  
 Հայրիկը լնու, խորասուզված,  
 Ինչու հայրիկն իր հարցերին  
 Պատասխանեց այնպես հուզված...

3

Մի որ դարձյալ քարավանը  
 Հեռուններից զիւ զրնգաց.

Լսեց Քաջիկը հետաքրքիր,  
 Գլխում ծագեց մի միտք հանկարծ.—  
 Դուրս ծլկրվել հորից ծածուկ  
 Ու լողալով անցնել գետից,  
 Ու գանձերով բարձված հարուստ  
 Քարավանը դիտել մոտից...

\*

Քարավանը բլրի դռին  
 Վեր հանելով ճամբի փոշին՝  
 Զրը՛նգ-զրը՛նգ՝ յեկավ ահա,  
 Ինչպես շարժուն, նախշուն շղթա,  
 Պսպղում են հուլունք, հմա,  
 Փերթեր անթիվ, թելեր սրմա,  
 Զարդեր պես-պես ու գույնզգույն,  
 Զանգակիկներ զվարթ-զնգուն,  
 Վոր պճնել են առատ-առատ  
 Ուղտերի ծուռ վիզն ու ճակատն:  
 Հիանում է տղան աղքատ  
 Նստած են մեծ ճանապարհին,  
 Հայացքը ճոխ քարավանին...

Գնում են լուռ յերկար շարքով  
 Ծուռվիզ ուղտերն իրար հետքով,  
 Նրանց վարում են անձանոթ  
 Մարդիկ հեծյալ ու հետիոտ.  
 Նրանց թանձրը բեխին, դռին  
 Նստած է հաստ՝ ճամբի փոշին:

Մինչ Քաջիկը դիտում էր լնու,  
 Մեկ էլ ահա մի մարդ՝ ամուր  
 Բռնեց նրա թևից հանկարծ  
 Ու ընկերոջն այսպես ասաց.



«Ի՞նչ սիրուն ե և ինչ առողջ,  
Արժե սա մի քաղաք ամբողջ,  
Կը վաճառենք սրան մեկին,  
Ու փոխարեն կառնենք մեծ գին»:

— Գոհար ե թանգ,

Այ թե գտանք...

Ասաց հարուստ վաճառականն

Ու գրկելով սիրուն մանկան՝

— Անունդ ի՞նչ ե,— նա հարց տվեց:

— Քաջիկ,— տղան պատասխանեց:

— Ի՞նչ գեղեցիկ անուն ունես,

Յե՛վ խելացի, և՛ սիրուն ես.

Քեզ պես սիրուն տղան՝ պիտի

Թագավորին լինի վորդի,

Թագավորի մեծ պալատում

Ապրես ազատ և անտրտում,

Շորերըդ նոր, ջուրըդ անուշ,

Ուտե՛լիքըդ շաքար ու նո՛ւշ:

Արի, փոքրիկ, դու մեզ լսիր,

Տանենք մեզ հետ հեռու յերկիր,

Ապրես ազատ և անտրտում

Թագավորի մեծ պալատում:—

— Մեր խրճիթը գետափին,

Հայրիկ ունեմ յես դարբին

Մայրիկ ունեմ յես անգին,

Քույրիկ ունեմ թանկագին,

Նրանք սիրում են ինձ շատ,

Յես չեմ ուզում մեծ պալատ:—

Պատասխանեց Քաջիկն այսպես,

Բայց զույգ թե՛վեր անմիջապես

Ողակեցին մեջքը նրա,

Դրին բարձր ուղտի վրա...

\*

Քարավանը զրնգալով  
Կտրում եր մեծ, յերկար ճամբեն,  
Մեր Քաջիկին հետաքրքիր  
Տանում եր նա ոտար յերկիր...

4

Եստեղ՝ Քաջիկն ե զուր լալիս,  
Ենտեղ՝ նրան ման են գալիս,  
Ման են գալիս ու չեն գտնում,  
Ճամբից յելնում, ձորը մտնում:  
Թողած անգործ մուրճն ու քուրան  
Վորոնում ե հայրը նրան.  
Մայրը անհույս ծամն ե փետում,  
Քույրը քնքուշ՝ լալիս տրտում,  
Բայց յեղբայրն են աղջկա  
Կորած անհետ՝ չկա, չկա...

Գայլը առավ տարավ հետը,  
Թե կուլ տվեց նրան գետը...  
Հայրը մենակ յետ յեկավ տուն,  
Չեր գտել նա կորած վորդուն:  
Քաղաքի մեջ ամենքն ասին,  
Թե լուր չունեն նրա մասին:  
Լաց են լինում ու կսկրծում,  
Խելակորույս՝ ծունկն ե ծեծում  
Մայրը անբախտ, քույրը՝ լալիս...  
Տղան չկա ու չի գալիս...

Քաջիկի խեղճ քրոջը Վարդ,  
Ծնողներին նրա անբախտ

Թողնենք իրենց կորուստը լան,  
Իսկ մենք գնանք գեպի տղան:

5

Գնաց, գնաց են քարավանն,  
Անցավ գյուղեր, քաղաք, ավան,  
Թողած յետև ցամաք ու ծով,  
Չանգերի զիլ զրնգոցով  
Գնաց հասավ են անվանի  
Քաղաքը մեծ Սեվ-իշխանի:  
Ամրոցն ահա նրա հպարտ,  
Չորս բոլորը պարսպապատ...  
Ու յերկաթե մեծ դռանը  
Կանգ առավ են քարավանը:

Յեկան ուժեղ ու վիթխարի  
Մշակները Սեվ-իշխանի  
Ու ներս տարան բեռներն անգին,—  
Քառասուն բեռ արծաթ-փոսկին,  
Քառասուն բեռ ատլաս ու խաս,  
Քառասուն բեռ բեհեզ, կերպաս,  
Քառասուն բեռ թանկագին քար,—  
Լալ ու մարջան, ակն ու գոհար...

Իսկ Քաջիկին—գերի մանկանն՝  
Տարավ ինքը վաճառականն,  
Խոնարհվելով մինչև գետին՝  
— Վողջոյն, ասաց, մեծ իշխանին,  
Քո փառավոր գահին վայել՝  
Մի թանկագին ակն եմ բերել.  
Ծառան ենք քո միշտ հնազանդ,  
Մեծ իշխանի արևը շատ...

ժպտանց իշխանն, և իբրև գին  
Մանեկան համար փոսկեգիտակ՝  
Ընծայեց են ավագակին  
Վոսկիներով լի մի քսակ:  
Այսպես, Քաջիկն, են լավիկը՝  
Դարձավ նրա մանկավիկը:

6

Բայց Քաջիկը տխուր-տրտում՝  
Շատ չը մնաց այդ պալատում,  
Չար եյին, փողջ—փոքրից մինչև  
Գոռոզ, անգուլթ իշխանը Սեփ:  
Իշխանիկն ել—փոքրիկ մի գայլ՝  
Չար եր նույնպես ու բռնակալ.  
Սա յեւ գոռոզ իր հոր նման  
Տալիս եր ծեծ ու հրաման:

Հավաքում եր շատ անգամ նա  
Մի խումբ փոքրիկ աղջիկ, տղա,  
Յեվ ամբողջ արձակ բակում  
«Տեր ու ծառա» խաղ եր սարքում:  
Ինքը հարուստ տերն եր դառնում,  
Մյուսներին ծառա բռնում,  
Գործի զնում ամեն մեկին:  
Ով հավարտեր ժամանակին՝  
— «Ծուլլ ծառա յես, վարձիդ տեղակ—  
Առ քեզ ահա մի չաղ ապտակ»...  
Բարկանում եր, գոռգոռում նա,  
Ծեծում, պատժում խիստ անխնա:  
Շատ անգամ ել ցավից սաստիկ  
Լաց եր լինում «ծառան» պստիկ:  
Այդ ժամանակ «տերը» ահա,  
Ծիծաղելով նրա վրա

Ասում եր խիստ գոռոզաբար.  
— Չայնըդ, հիմար,  
Ցավին պետք ե դու դիմանաս,  
Վոր ծառայի դերն իմանաս.  
Վորպեսզի յերբ մեծանաս դու  
Ծառա դառնաս հեզ ու հլու...

Տեսնում եր հայրն ու հիանում,  
Սրտի խորքից ուրախանում.  
— «Այ իսկական իշխանի ճուտ,  
Պետք ե լինել այդպես անգուլթ,  
Ել լինչ իշխան ու հպատակ՝  
Թե չը լինեն սուր ու ապտակ»...

Քաջիկն եր սոսի, են լավիկը,  
Նրա ըմբոստ մանկավիկը,  
Վոր չեր կարող տանել իսկի  
Չար արարքներն իշխանիկի:  
Սա յեւ նրան վոչ թե Քաջիկ,  
Այլ գոչում եր «ըմբոստ արջիկ»:

— «Արջիկ, արջիկ, գեր արջիկ,  
Դունչըդ մոտիկ բեր, արջիկ,  
Կարկանդակ տամ, կեր, արջիկ»...  
Յերգում եր միշտ, ծաղրում նրան:  
Բայց չդիմացավ դարբնի տղան,  
Մի որ ել մեծ մի քար առավ,  
Մի քար առավ, տարավ բերավ,  
Տարավ բերավ ու շեշտակի՝  
Գլխին գոռոզ իշխանիկի...

Յերբ սա անշունչ գետին փռվեց՝  
 Քաջիկն արագ դուրս ծլկրվեց,  
 Ու շունչն առավ, արդեն մթան՝  
 Մի բարեսիրտ պառավի տան։  
 — Տատի, գիշերս առ ինձ քեզ մոտ,  
 Թույլ տուր քնեմ մինչ առավոտ...  
 Ու շնչասպառ պատմեց տղան  
 Իր հանցանքի մասին նրան։  
 — Վնւյ, քուանամ, ինչ ես արել,  
 Ինչ փորձանք ես գլխիդ բերել...  
 Բացականչեց կինն ահառած.  
 Քաջ կորյունին գիրկըն առած.  
 Դու մի փոքրիկ պատանի դեռ՝  
 Քո ինչ բանն եր մարդ սպանել.  
 Են ել հւմը... Վնյ իմ գլխին,  
 Մեծ իշխանի իշխան տղին...  
 Բայց թե բարի պառավը քո  
 Չի թողնելու, վոր կորչես դու։  
 Միայն թե դու մի ժամանակ  
 Պիտի ապրես թագուն, մենակ,  
 Վոր քեզ վոչ վոք չճանաչի,  
 Մինչև արյան հետքը կորչի։—  
 Ասաց պառավն ու բացեց լուռ.  
 Ներքև տանող գաղտնի մի դուռ,  
 Ու յերկուսով իջան իսկույն  
 Խիստ ապահով մի ներքնատուն։  
 — Ամեն բանըդ ահա տեղին,  
 Սա հաց ու ջուր, սա անկողին,  
 Սա յեւ ճրագ քո գլխավեր,  
 Դե, բալա ջան, բարի գիշեր,—



Ասաց բարի կիներ նրան,  
Դուռը ծածկեց, կողպեց վրան:

Իսկ իշխանի են ամրոցում,  
Մեծ աղմուկ է, իրարանցում...  
Սպանված է իշխանիկը,  
Չկա հանդուգն մանկլավիկը...  
— Ո՞ւր է կորել մարդասպանը,—  
Մռնչում է Սեվ-իշխանը  
Վիրավորված գազանի պես.—  
— Դտնել նրան անմիջապես:

— Նրան մեռած ով վոր բերի,  
Նա կստանա հազար վոսկի,  
Ով անփառ ու կենդանի՝  
Կրկնապատիկ նա կը տանի,  
Իսկ ով պահի ու թագցնի,  
Թող իր գլխից ձեռ վերցնի»...  
Վորոտում է սարսավելի  
Հրամանը Սեվ-իշխանի:—  
Ման են գալիս ամենուրեք,  
Ման են գալիս գիշեր-ցերեկ,  
Մի վողջ ամիս մարդիկ նրա  
Քաղաքն արին տակն ու վրա,  
Մանկլավիկը չկան, չկան:  
Ի՞նչպես յեղավ, ո՞ւր կորավ նա,  
Այ թե պատիկ քեզ սատանա...


8

Մի ամիս վոր անցկացավ  
Պառավր մեր տղին առավ.  
— Հիմի պետք է քեզ հեռանալ,  
Մեր քաղաքից հեռու գնալ,

Ես քաղաքում այսուհետև  
Դու չես կարող տեսնել արև.  
Պատրաստ յեղիր, վոր միասին  
Դուրս ենք գալու արշալուսին:

Պառավր վաղ զարթնեց քնից,  
Տղին հանեց ներքնատնից.  
Հանեց շորերն մանկլավիկի  
Ու հագցրեց մուրացիկի:  
Կախեց ուսից հին, կարկատած  
Մի պարկ՝ միջին յերկու չոր հաց:—  
Այդ տարագում նա իսկական  
Մի խեղճ աղջիկ էր մուրացկան:  
Ամաչում էր Քաջիկը,  
Տատիկի սուտ աղջիկը:  
— Չե, բալա ջան, մի ամաչի,  
Միայն թե մարդ չը ճանաչի...  
Ասաց բարի պառավր այն  
Ինքն էլ մի չուլ առավ վրան  
Ու դուրս յեկան մուլթը գետին  
Հաց մուրալու թոռն ու տատին:

Գնում եյին լուռ միասին  
Տատի ձեռը թոռան ուսին.  
Կնւյր էր պառավ տատը տրտում,  
Թոռն էր նրան առաջնորդում:  
Իսկ քաղաքից յերբ դուրս յեկան  
Յեվ ընդարձակ դաշտը ընկան՝  
Ժպտանց բարի կույր տատիկը,  
Ժպտանց նրա ժիր թոռնիկը  
Ու պինդ գրկեց յերախտազին  
Հնարագետ իր տատիկին...



326  
40

— Դե, բալա ջան, հիմի գնա,  
Բախտը քեզ հետ, բարի ճամբան,  
Միշտ կլինի մեկը բարի,  
Վոր քեզ սիրի, պատասպարի...  
Համբուրվեցին յերկար-յերկար  
Ու հրաժեշտ տվին իրար:

9

Քաջիկն անվախ՝ հանդիպակաց  
Գյուղի ճամբեն բռնեց գնաց.  
Բայց նա ինչքան վոր գնում էր՝  
Գյուղն ել ենքան հեռանում էր:  
Հոգնած էր խիստ, սաստիկ ուժատ,  
Ու ծարավն ել տանջում էր շատ:  
Լնու, ամայի, անջուր ճամբա...  
Նստեց, վոր քիչ հանգստանա.  
Գյուղը հեռու և անծանոթ,  
Ինքը մանուկ՝ մենակ ճամբորդ...  
Հիշեց իրենց քաղաքը հին,  
Խրճիթը են գետի ափին,  
Ծնողներին իր թանկագին  
Յեվ իր սիրուն Վարդ քույրիկին...  
Հիշեց, հիշեց, շատ կարոտեց,  
Ու կարոտից նա արտասվեց.  
Հետո՝ գլխի տակին մի քար՝  
Պառկեց հոգնած, քնեց յերկար:

Քնեց... Քնից վոր արթնացավ,  
Ինչ վոր տեսավ՝ շատ զարմացավ...  
Եդ ամայի դաշտի միջում  
Մի աղբյուր էր ջինջ խոխոջում,  
Ափին կանանչ, յերիտասարդ

Մի ուռենի տերևազարդ.  
Ծառի վրա թառած հնչուն՝  
Մի գեղեցիկ խոսող թռչուն.  
Ծառի տակն ել, ապա նայի՝  
Մի ձեռք մաքուր շոր տղայի...  
Զարմացք մնաց մեր Քաջիկը,  
Տատի աղքատ են աղջիկը.  
Կուցավ եդ աղբրի վրա  
Ու կնշտ խմեց ջրից նրա,  
Ու լվացվեց, զվարթացավ,  
Զվարթացավ ու վեր կացավ,  
Հանեց շորերն իր վրայի,  
Հագավ նորերն են տղայի  
Յեվ շողշողուն ու գեղանի  
Դարձավ սիրուն մի պատանի:  
Ինչ լավ յեղավ... ուրախացավ,  
Ուրախ, առույգ ճամբան ընկավ:

10

Գնաց, գնաց նա տարագիր,  
Ման յեկավ շատ քաղաք, յերկիր,  
Որեր տեսավ նա լավ ու վատ,  
Մարդիկ տեսավ հարուստ, աղքատ,  
Ամեն տեղ ել ծառա ու տեր,  
Գոռոզ իշխան, գերի ճորտեր:  
Մեկը խնդում, ծափ ե տալիս,  
Մեկը տրտում, տնքում, լալիս,  
Մեկի սեղանն առատ ու ճոխ,  
Մեկի սուփրին սև հաց ու սոխ...

Անց էր կենում նա մի ուր  
Տխուր-տրտում ու մոլոր

Մի ծուռ ու մուռ փողոցով  
 Միրար ցավի անտակ ծով...  
 Տեսավ մոտիկ դարբընոց,  
 Դարբընոցում թեժ հնոց,  
 Ու հնոցի դեմ ահա,  
 Մի ծեր դարբին աժդահա  
 Աշխատում է մեն-մենակ  
 Հեան ել յերգում շարունակ,—

«Վառվիր, հնոց,  
 Կրակ ու բոց  
 Արեգակի պես պայծառ,  
 Մեր ուր մուխ,  
 Արենքն անգուլթ,  
 Մեր քրտինքը ծնվ անծայր»

Մուրճ իմ, իջիր,  
 Ուժգին հնչիր,  
 Անթիվ կայծեր դու փռի,  
 Քո ամեն մի  
 Կայծը կարմիր  
 Վաղը հրդեհ կը վառի»...

Լսեց, լսեց լուռ՝ պատանին  
 Ծեր դարբընի այդ յերգը,  
 Ու նորոգվեց սրտում կրկին  
 Սպիացած հին վերքը:  
 Թվաց նրան թե հայրն է իր  
 Հնոցի դեմ կանգնած՝ ծեր,  
 Հուժկու մուրճի զարկով կարմիր  
 Շուրջը ցրում է կայծեր:  
 Աչքերի դեմ յեկան կրկին  
 Մայրն ու քույրը սգավոր,

Ու խրճիթը խարխուլ ու հին  
 Գետի ափին՝ մենավոր...

Կանգնեց տխուր, նայեց յերկար  
 Ու ներս մտավ, տվավ բարե:  
 — Բարձր, վորդի, բարի յեկար,  
 Քեզ ուրախ կյանք, յերկար արև:  
 — Յես լսեցի,—տղան ասաց,—  
 Վարպետ, խիղախ քո յերգը,  
 Աշկերտ առ ինձ, թող սովորեմ  
 Արհեստը քո ու յերգը...  
 Ժպտաց դարբինն ու հոր նման  
 Տվեց սրտանց մի համբույր,  
 Ու պատանին պատմեց նրան  
 Իր պատմությունը տխուր:

— Մնա,— ասաց ծերը նրան,  
 Մի կին ունեմ տանը մենակ,  
 Ապրիր մեզ մոտ վորդու նման,  
 Մենք քեզ ծնող, դու մեզ զավակ:

# 11

Դարբինը այն հասակ առած  
 Մարդ եր խելոք ու բանիմաց,  
 Իսկ դարբընի կինը անգին՝  
 Մի բարեսիրտ, լավ տանտիկին.  
 Միրում էյին շատ, անսահման՝  
 Մեր Քաջիկին վորդու նման,  
 Սա յեկ նրանց, վորպես զավակ՝  
 Տալիս եր մեծ պատիվ ու հարգ:

Ամեն ուր վաղ լուսաբացին  
 Գնում էյին իրենց գործին  
 Հայրն ու վորդին իր գեղեցիկ.

Շինում եյին պես-պես գործիք:  
 Ու պատմում եր ծերն ամեն որ  
 Պատմություններ միշտ նորանոր.  
 Ու մեկ-մեկ ել յերգում եյին  
 Թեժ հնոցի դեմ միասին:  
 Հնոցի դեմ կանգնած ահա  
 Ծեր դարբինը մի աժդահա  
 Ժայռ ե ասես, իսկ ժիւր, պայծառ  
 Պատանին այն՝ մի կաղնի ծառ,  
 Վոր աճում եր տարեց-տարի  
 Դառնում հզոր ու վիթխարի:

12

Մի որ սակայն դարբնի վորդին  
 Հիշեց անցած որերը հին,  
 Խրճիթն իրենց գետի ափին  
 Ու ծերունի հորը դարբին,  
 Հիշեց անո՛ւշ իր մայրիկին,  
 Հիշեց քնքո՛ւշ իր քոյրիկին...  
 Ու վորոշեց նա հաստատուն  
 Վերադառնալ հայրենի տուն:

— Հայրիկ,—մի որ Քաջիկն ասաց,  
 Յե՛վ դու, մայրիկ իմ անմոռաց,  
 Դուք ինձ համար քանի տարի  
 Ծնողներ եք յեղել բարի.  
 Սակայն հեռո՛ւ-հեռո՛ւ յերկրում  
 Յես ծնողներ ունեմ անգին,  
 Վորոնց կարոտն ամենուրեք  
 Այրել ե ինձ գիշեր-ցերեկ...  
 Թույլ տվեք դուք ինձ — ձեր վորդուն,  
 Նորից գնալ հայրական տուն:  
 Տխրեց անչափ ծեր դարբինը,  
 Տխրեց նաև նրա կինը,

Բայց Քաջիկի եղ վորոշմանն  
 Արգելք չինել չը կամեցան:  
 — Գնա՛, վորդիս, քեզ արև որ,  
 Գնա հասիւր տունը քո հոր,  
 Չարի հանդեպ յեղիր դու չար,  
 Բարուն՝ բարի, լավին՝ յեղբայր. —  
 Ասաց խելոք ծերունին այն  
 Ու համբուրեց ճակատը լայն:

— Ձեռքըդ արդար, դալար մնա,  
 Չորի գարնես՝ կանաչ դառնա,  
 Քո վոտքերի տակը, վորդի,  
 Անապատը թող ծաղկոտի...  
 Որհնեց պառա՛ւն իրա հերթին  
 Կարոտավառ մեր ճամբորդին:  
 Այսպես նրանք ու պատանին  
 Համբուրվեցին կրկին-կրկին,  
 Ու Քաջիկը ընկավ ճամբա  
 Դեպի հեռու քաղաքն իրա:

13

Գնաց-գնաց մեր կտրիճը,  
 Ինքը գիտե շատն ու քիչը,  
 Գնաց մի մեծ քաղաք հասավ,  
 Եղ քաղաքին նայեց՝ ասավ.  
 — Սա ինձ ծանոթ ու անվանի  
 Քաղաքն ե հո Սե՛վ-իշխանի:  
 Չորս բոլորը պարսպապաս  
 Ամրոցն ահա նրա հպարտ:

Ու Քաջիկը հիշեց մեկ-մեկ  
 Անցած տխուր որերը մեզ...  
 Ու կամեցավ վերջին անգամ

Տեսնել տատին իր բարեկամ:  
Մութն եր արդեն, թեքեց ճամբան,  
— Հյուր կլինեմ յես նրա տան  
Յե՛վ առավոտ ծեղին ել յետ՝  
Ճամբա կընկնեմ արևի հետ:

Մտքերի հետ զնում եր նա,  
Մեկ ել՝ դիմացն յելավ ահա  
Յերկուտակված պառավ մի կին՝  
Անտառի չոր ցախ շալակին:  
Շուտ ճանաչեց մեր պատանին  
Ազատարար իր տատիկին,  
Բայց զսպելով մի կերպ իրան՝  
— Բարև, տատի, ասաց նրան,  
Պառավ կին ես տկար, ուժատ,  
Տեսնում եմ վոր հոգնած ես շատ,  
Տուր բեռը քո տանեմ, պառավ,  
Ասաց բեռը շալակն առավ,  
Ու պառավից առաջ-առաջ՝  
Գնաց կանգնեց դռան առաջ:  
Յերբ պառավը յեկավ հասավ,  
— Զարմանք բան ե, վորդի, ասավ,  
Ո՞վ ցույց տվեց քեզ իմ դուռը,  
Դալար մնա միշտ քո կուռը...  
Տղան ժպտաց բարեժպիտ,  
Իսկ յերբ մտան նրանք խրճիթ՝  
Քաջիկն ասաց կարոտալից.  
— Զե՛ս ճանաչում, տատի, դու ինձ,  
Հյուր եմ յեղել քեզ մոտ ելի,  
Յերբ դեռ մի գիժ մանուկ եյի...  
Նայեց պառավն ոտարոտի.  
— Ի՜նչ ճանաչեմ, ասաց, վորդի,

Շատ են յեկել ու գնացել,  
Միտքս վոչինչ չի մնացել...  
— Քաջիկն եմ յես, տատիկ անգին,  
Դու չե՞ս հիշում քո թոռնիկին,  
Վորի համար ազատարար,  
Հնարագետ տատիկ յեղար:  
— Քաջիկն ես դու... մի՞թե, վորդի,  
Յեկած ճամբեդ թող կանաչի.  
Ասաց պառավն ու կաթոգին  
Սեղմեց նրան իրա կրծքին...  
Պատմիր, վորդի, գալըդ բարի,  
Վճրտեղ եյիր այսքան տարի.  
Տղամարդ ես դարձել սիրուն,  
Յերկար արև, կանաչ գարուն...

Պատմեց Քաջիկն իրա մասին,  
Ապա դարձավ նա պառավին.  
— Դո՛ւ ինչպես ես ապրում, տատի:  
— Ե՛, վճնց պիտի ապրեմ, վորդի,  
Շատերի պես չարչարանքով,  
Ուրիշների չոր փշրանքով,  
Մեր քաղաքում իշխանը Սե՛վ  
Նստած ինչպես անարկու դե՛վ՝  
Խմում ե մեծ իր բերանով  
Խեղճի արյուն-քրտինքը ծով:  
Կյանքը մեզ մոտ սև-սպիտակ՝  
Ընկույթի պես բան ե շիտակ,  
Միջուկն՝ անգուլթ-անամոթին,  
Կճեպը չոր՝ ժողովուրդին...  
Լռեց տրտում պառավը խեղճ  
Արցունքները աչքերի մեջ.

Լուռ եր նաև հյուրը նրա,  
Ծանրը մի քար սրտի վրա...

14

Քաջիկն յելավ մութը գետին,  
Մի սուր դանակ խրեց գոտին,  
Գոտին պնդեց ու մի քսակ  
Դնելով իր վերմակի տակ՝  
Անցավ արագ տուն ու փողոց,  
Պարսպից բակ, բակից ամրոց,  
Յեւ ահա նա — քաջ պատանի՝  
Ննջարանում Սեւ-իշխանի:  
Քնած է նա խիստ ապահով  
Լուսադեմի խորը քնով:  
Բայց քաշելով մեծ ականջը՝  
— Վեր կաց՝ իշխան, գոռաց քաջը,—  
Հյուր է յեկել քեզ, ընդունիր,  
Վեր կաց, նորից խորը քնիր...  
— Ո՞վ ե, ի՞նչ հյուր ես ժամանակ,—  
Մուտաց նա քնից անհագ:  
— Չե՞ս ճանաչում այն մանուկին,—  
Ասաց Քաջիկն հաղթահասակ,  
Վորի համար դու իբրև գին՝  
Վճարեցիր մի լի քսակ:  
Մանկավիճիկի հապա հիշիր,  
Հոգեառին քո չար վորդու,  
Վեր կաց, իշխան, թուրը քաջիր,  
Կովենք հիմի յեւ յես ու դու:  
— Մանկավիճիկը... Գրո՞ղ տանի,—  
Գոռաց իշխանը կատաղի  
Ու վեր կացավ,— կովենք ասավ,  
Թուրը քաշեց, վրա հասավ,

Վոր առաջին զարկով թրի  
Ախոյանին գետին փռի:  
Բայց վիթխարի քաջ պատանին  
Բռունցքի մեկ զարկով ուժգին  
Թոցըրեց մեծ թուրը նրա  
Ու գետնելով չոքեց վրա:  
Չոքեց վրա ու դանակը  
Սիրտը խրեց մինչ դաստակը:  
Ապա արագ՝ կայծակի պես,  
Դուրս սլացավ անմիջապես:

Աղմուկ ընկավ, իրարանցում  
Սեւ-իշխանի են ամրոցում:—  
Սպանված է իշխանը մեծ  
Ննջարանում, իր մահճի մեջ...  
Ո՞վ եր կտրիճն այն համարձակ,  
Վոր սլացավ ինչպես կայծակ,  
Տապալելով զարկով խրոխտ՝  
Մարսափահար պահակ, պահնորդ...

Դուրս է գալիս քաջ-աժդահա  
Հեծյալների մի խումբ ահա,  
Գտնեն նրան վորտեղ լինի,  
Խմեն արյունն ինչպես գինի...

15

Ծովն է ծփում լափին-լափին,  
Կանգնած ահա նրա ափին  
Մի պատանի սիրուն, պայծառ՝  
Հեռուներ է նայում անծայր...  
Յետ է դառնում, տեսնում է նա  
Հեծյալների մի խումբ ահա  
Մոտենում է խիստ անհամբեր  
Վեր հանելով փոշու ամպեր...



...Ու փոթորիկ յելավ հանկարծ,  
Ալիք-ալիք ծովը ծփաց.  
Ալիքներից այդ լուսեղեն  
Ծնվեց նժույգ մի հրեղեն,  
Սանձը փոսկի, թամբը հարմար,  
Բաշը փրփուր, ինքը մարմանր...  
— «Դարբնի տղա, ահա քեզ ձի,  
Հեծիր նրան ու սլացի»—  
Ձայն տվեցին, ասին նրան,  
Ալիքները միաբերան...

Սլանճւմ ե քամու նման  
Կտրելով թափ սար ու սահման,  
Նա մի կտրիճ՝ փոթորկածին՝  
Հեծած իր հուր-հրեղեն ձին...  
Ցուլւմ ե նա իր նժույգով,  
Ո՞վ կը հասնի նրան ել, ո՞վ...

16

Գնաց, գնաց,—շատն ու քիչը  
Գիտեն ձին ու մեր կտրիճը,  
Նրա սրտում ամեն վայրկյան  
Հուր կարոտն եր հայրական տան:  
Ու մի որ ել՝ ահա և հին  
Քաղաքն իրենց գետի ափին:

...Ի՞նչ ե տեսնում տղան տրտում,  
Տեսածին ել չի հավատում,—  
Քաղքի վրա—տխուր այնպես՝  
Սև մոխիր են ցանել ասես,  
Ծառերը չոր, տերևազուրկ,  
Դաշտի խոտը գեղին-զալուկ.

Վնչ հորովել, վնչ ուրախ յերգ,  
Գետը ցամաք, արտերը մերկ...

Թռավ Քաջիկն իր ձիուց ցած,  
Սիրտը փշուր, աչքերը թանց,  
Նայեց տիուր վերջալույսին,—  
Արևն աշնտեղ, սարի ուսին  
Կարապի պես վերջին շնչում՝  
Խեղզըվում եր արնե լճում...

Նայեց յերկար ու ձին հեծավ,  
Սրտի վրա անհուն մի ցավ.  
Լուռ եր չորս ղին, տուն ու փողոց,  
Ինչպես մի մեծ գերեզմանոց...

Կանգնեց իրենց խրճիթի մոտ  
Ու ներս նայեց: Ներսից ազոտ  
Պլպլում եր մի լույս բարակ...  
Սիրտը նրա զարկեց արագ,  
Ու կարոտով նա անսահման  
Բախեց դուռը իրենց հին տան:

Դուռը բացվեց... դռան շեմքին  
Կանգնեցին մի աղջիկ ու կին:  
Կինը կույր եր ու կուչ յեկած,  
Իսկ աղջիկը սևեր հագած  
Նայում ե լուռ ու վեհերոտ...  
Ո՛վ ե կարիճն այս անծանոթ,  
Գեղեցկադեմ ու թիկնավետ  
Իր հրեղեն նժույգի հետ...

— Չե՞ք ճանաչում, մայր իմ անգին,  
Յե՞վ դո՛ւ, քույրիկ իմ թանկագին...

Ասաց տղան թեատարած,—  
Քաջիկն եմ ձեր վաղուց կորած...

Ասաց-չասաց, անմիջապես,  
Նրանք յերեք կրակ ասես,  
Յերեք խարույկ վառ ու վարար՝  
Փաթաթվեցին իսկույն իրար...  
— Կուրացե՛լ ես, մայր իմ անգին,  
Իսկ ռւր ե իմ հայրը դարբին,  
Հայրըս բարի, փոր քրտնադեմ՝  
Հաց եր դատում կրակի դեմ:

Ասա՛, միթե վաղուց ե, մայր,  
Հանգել նրա հնոցը վառ...

— Վաղուց, փորդիս, ու նրա հետ  
Լույսն աչքերիս հանգամ հավետ,  
Վոր չը տեսնեմ այս յերեկո.  
Քաջիկ, պայծառ պատկերը քո...

— Հասար, հասար, յեղբայր անգին,  
Միակ քրոջդ հարսանիքին,  
Մայրիկը մեր գտավ մեկին,  
Կրկորցնի վաղ մյուսին...  
Քույրն եր խոսում, պտույտ գալիս,  
Մեկ խնդում եր ու մեկ՝ լալիս...

17

— Պատմիր, մայրիկ, թե ի՞նչ ե սա,  
Այսոր գալիս յես ի՞նչ տեսա,  
Ամենուրեք տխուր աշնպես՝  
Սև մոխիր են ցանել ասես.  
Ծառերը չոր, տերևազնւրկ,  
Դաշտի խոտը դեղին, դալճկ,  
Գետը ցամաք, արտերը մերկ,

Վնչ հորովեր, վնչ ուրախ յերգ:—  
Ես քաղաքում, վոր յես տեսա,  
Ի՞նչ հարսանիք, հարս կամ փեսա...

— Ե՛, բալա ջան, ջանիդ դուրբան,  
Ի՞նչ հարսանիք, ի՞նչ յերգ, ի՞նչ բան...  
Եսպես կյանքից մահն ե լավը,  
Սահման չունի ել մեր ցավը:  
Մենք միշտ ծարավ,—սրտներըս հուր՝  
Չուր չենք խմում այլ արնաջուր...  
Յոթ տարին ե լրանում սա,  
Բայց թվում ե յոթը հարյուր,  
Մի վիշապ ե ծնվել անկուշտ,  
Մի մարդակեր արյունըռուշտ,  
Յոթգլխանի հրեշ-վիշապ,  
Վոր սփռում ե մահ ու սարսափ՝  
Շնթոկել ե գետի ակին  
Չարհուրելի և տհազին՝  
Կլանում ե հրեշ-հսկան  
Պայծառ լույսը արեգական,  
Կուլ ե տալիս գետը համակ,—  
Հո տեսա՞ր դու հունը ցամաք,—  
Ամեն անգամ, վոր ջուր թողնի՝  
Պետք ե մի կույս կամ պատանի.  
Ու յերբ վոր նա պատառ-պատառ  
Լափում ե իր զոհը թշվառ,  
Քաղաքը վողջ—կին ու տղա,  
Առած մեկ-մեկ կուժ ու կուլա,  
Գետն են վազում՝ լցնեն շուտով  
Ամանները արնաջրով...  
Չուրկ, անարև և անոթի,  
Ե՛ս ե մեր սև ուրը, վորդի,

Հերթը մերն ե, քրոջդ, ափնդ,  
Պիտի տանենք առավոտ վաղ,  
Վոր ջրագուրկ քաղաքն ելի  
Յերկու ուրվա ջուր ամբարի...

Լռեց մայրը: Քաջիկը լնւ՝  
Ընկավ մտքի ծովը տխուր...  
Տեսավ քաղաքն ավեր-վերան,  
Մոխիր ասես ցանած վրան,  
Կժերը լի արնաջրով,  
Կյանքը մռայլ, մոլթ արնածով...  
Կարմիր վարդի նման բացված  
Քնկյուն ահա մահապարտված,  
Նայեց, նայեց նրանց վրա  
Ու փոթորկվեց հոգին նրա.  
Գոչեց.— քնկյր իմ, չքնադ պատկեր,  
Յես չեմ տա քեզ հրեշին կեր:  
Քո փոխարեն վաղ առավոտ  
Յես կը գնամ վիշապի մոտ:  
Չար հրեշին յես կսպանեմ  
Ու քաղաքը ազատ կանեմ:

— Չուր ե, վորդիս,— մայրը՝ ասաց,—  
Քո ուժն ի՞նչ ե նրա դիմաց,  
Շատ քաջեր են քեզ պես փորձել...  
Ու վոչ մեկը յետ չի դարձել:  
Դու յեղ կերթաս ու չես դառնա,  
Չար ե վիշապն ու անխնա...

— Պիտի գնամ առավոտ վաղ,—  
Ասաց հաստատ Քաջիկն անվախ,  
Ասաց՝ յելավ անմիջապես,  
Վառեց իսկույն հնոցը թեժ,  
Հնոցը, վոր հարկի ներքո

Չեր վառվել հոր մահից հետո...  
 Վերցրեց նա պողպատ մի կողո,  
 Վերցրեց նա մուրճը հուժկու,  
 Յեվ նայելով հոր ավանդին՝  
 Այսպես խոսեց նրա փորդին.  
 — Շատ ես բանել դու անդադար,  
 Մուրճ իմ, իմ հոր ձեռքում արդար,  
 Շինել ես դու մանգաղ ու բահ,  
 Շատ գործիքներ... տեսնեմ հապա,  
 Նրա փորդու ձեռքում հզոր  
 Ահեղ մի սուր կռիւր այսոր,  
 Հասել ե այն որը անա,  
 Վորի մասին յերգում եր նա—  
 Հայրն իմ բարի դարբինը ծեր,  
 Թափելով շուրջն անթիվ կայծեր:

18

Ու զարկում եր, զարկում ուժգին  
 Կռում եր նա թուր անապին,  
 Բորբոքել եր հնոցը վառ  
 Իր սրտի պես վրիժավառ...  
 Զարկեց անդուլ, խռովահույզ՝  
 Ամբողջ գիշեր մինչ արշալույս,  
 Յեվ իր անհղ մուրճով հուժկու  
 Շինեց նա մի թուր անարկու:  
 Ու վեր կացավ լուսածագին,  
 Կապեց նա իր թուր-կայծակին,  
 Թռավ հեծավ հրեղեն ձին:  
 Թուրը կապած, ձիու վրա՝  
 Մի նորածագ արեւ եր նա...

Յելան իսկույն նրա առաջ  
 Մայրն ու քույրը լալահառաչ,

Արտասովորո՞ծ ու ծնկաչոք  
 Աղաչեցին նրան ջոկ-ջոկ:—

«Վորդին փառավոր,  
 Կաց դու, մի գնա,  
 Իմ սրտում մի նոր  
 Դու վերք մի բանա,  
 Նոր ես թոթափել  
 Վոտքերիդ փոշին,  
 Մի դառնա, փորդինս,  
 Վիշապի բաժին:  
 Մի խավարի դուր  
 Քո ջահել որը,  
 Խնայիր քո կույր  
 Յեվ անբախտ մորը»...

— «Մի գնա, իմ քաջ,  
 Իմ կտրին յեղբայր,  
 Դու սոսի կանաչ,  
 Դու մոր մինուճար:  
 Շատերն են քեզ պես  
 Իգիթ ու հերոս՝  
 Կեր դարձել հրեշ  
 Զարին բարբարոս:  
 Մեկ ե, վաղ թե ուշ՝  
 Նրա բաժինն եմ,  
 Մնա, իմ անուշ,  
 Վոտքիդ փոշին եմ»...

— Բյուր մայրերի փորդեկորույս,  
 Բյուր քույրերի տխուր, առհույս,  
 Բյուր փորբերի արեւազուրկ՝

Կսկիծը դառնա ու արտասուք,  
 Ապրողների խեղճ ու թշվառ,  
 Մեռնողների վրեժը վառ՝  
 Իմ թևերին կրկին-կրկին,  
 Ուժ են տալիս, հւժ ահագին...  
 Ասաց կտրիճ այն պատանին,  
 Ասաց ու ձին ասպանդակեց,  
 Կայծակի պես ողբ ճեղքեց,  
 Ողբ ճեղքեց, հասավ ալին,  
 Տեսավ ահա են ահագին  
 Արյունըռուշա ժանա հրեշին, —  
 Յոթը գլուխ ունի վրան,  
 Յոթը գլխին յոթը բերան,  
 Ամեն բերնից ամեն վայրկյան՝  
 Ծուխ է յեղնում պալան-պալան...  
 Բայց ամենից մեծ ավելի՝  
 Միջին գլուխն է ահուելի...

Նայեց մի պահ քաջ պատանին  
 Ու թունդ յեղավ նրա հոգին...  
 Բազուկներում ուժ կուտակեց  
 Ու նժույգ ձին ասպանդակեց,  
 Ինչպես կայծակ վորոտագին՝  
 Ողում շողաց թուրն ահագին.  
 Ու գլուխը նրա միջին՝  
 Կտրեց զարկովն իր առաջին:  
 Ֆշշաց իսկույն վիշապը ժանա,  
 Թափեց շուրջը կրակ ու շանթ,  
 Բայց Քաջիկը մրրկարշավ  
 Իր նժույգով գնաց յեկավ  
 Ու յերկրորդ զարկով ուժգին՝  
 Մի գլուխն եւ զարկեց գետին...



Խոր մոռնաց վիշապն ելի,  
 Ու հինգ գլխիցն իր ահռելի,  
 Ինչպես ուժեղ հինգ հրաբուխ՝  
 Վիժեց գեղին կրակ ու ծով...  
 Բայց պատանին այնուհետև  
 Զարկեց արագ իրար յետև  
 Գլուխները բոլոր նրա  
 Ու հաղթական կանգնեց վրա...  
 Ու հենց ընկավ վերջին գանգը՝  
 Ծագեց պայծառ արեգակը,  
 Ու գետը հորդ, մեծաշառաչ՝  
 Իրա հունով վազեց առաջ...

19

Կանգնած նրա հորդ ալունքին՝  
 Նայում ե քաջն են քաղաքին.  
 Ի՞նչ ե տեսնում... բոլորն ահա  
 Առած մեկ-մեկ կուժ ու կուլա,  
 Խուճապելով անթիվ-բազում՝  
 Դեպի հորդած գետն են վազում...  
 Ու դարձնի դարձնի վորդին  
 Զայն ե տալիս ժողովուրդին.  
 — Սպասեցե՛ք, սպասեցե՛ք,  
 Այ ժողովուրդ, մի՛ք լցնի, մի՛,  
 Մինչ կը պարզի ջուրը հիմի.  
 Բայց թե նրան հի՛ է լսում,  
 Աղմուկ, խուճապ, իրարանցում,  
 Կին, տղամարդ, ծեր ու պառավ,  
 Զրակարոտ, ծարավ, ծարավ...  
 Ի՞նչ իմանան, թե եղ չարի  
 Արյունն ե հորդ գետը ներկել,  
 Ու վո՛չ սիրուն են անձարի,  
 Վորի մահվան հերթն եր յեկել...

Յեկել են մայրն ու քույրն ահա,  
 Բայց առանց կուժ, առանց կուլա,  
 Ծունկ են ծեծում ու հեծեծում,  
 Ու միասին վողբում, կոծում...  
 — Մեր Քաջիկի արյունն ե սա,  
 Ճար ու ճրագ մինուճարի,  
 Նա յեղ գնաց, ել յետ չի գա,  
 Բաժին դարձավ դաժան չարի...

Բայց գայիս ե Քաջիկն ահա,  
 Հեծած նժույգն իր աժդահա,  
 Ասում՝ լսե՛ք ջահել ու ծեր,  
 Դատարկեցե՛ք կժերը ձեր,  
 Այսուհետև գետն անսպառ,  
 Առատորեն մի՛շտ կհոսի.  
 Զախճախված ե գլուխն իսպառ  
 Արևակուլ բարբարոսի:  
 Դաշտերին ջուր, ծառին տերև,  
 Մեղ ազատ կյանք, որ ու արև...

Ասում՝ ձիուց թռչում ե ցած,  
 Ու գրկելով մորն հիացած՝  
 Տալիս ե վառ յերկու համբույր,  
 Ու բացվում են աչքերը կույր...  
 Լույսն ե տեսնում արեգական,  
 Տեսնում վորդուն իր հաղթական,  
 Վոր կանգնել ե ահա պայծառ,  
 Ինչպես կանաչ մի կաղնի ծառ՝  
 Կանգնած հպարտ անձայր անվերջ  
 Բազմության խիտ անտառի մեջ.  
 Ու ցնծության աղաղակը  
 Լցնում ե վողջ են քաղաքը...

Ու քաղաքում, ամենուրեք,  
Յոթը գիշեր, յոթը ցերեկ  
Խնջույք եր մեծ, նվագ ու յերգ...  
Գնվք եր յերգում յերկիրն արար  
Իր կտրիճին ազատարար...:



ՀՀ Ազգային գրադարան



NL0396456

9699

9699 1 п. 50 ч.



МКРТИЧ ХЕРАНЯН  
Сказка о сыне кузнеца  
и о семиглавох  
драконе  
Тиз Ари, «ՀԷՄ», Երևան, 1940 թ.